ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

2020-2021 ուստարին երկրում կսկսվի սեպտեմբերի 15-ին: Կսկսվի սակայն ոչ այնպես, ինչպես պատկերացնում էինք: Հինգ խոշոր քաղաքներում այն կսկսվի հեռավար մեթոդով եւ միայն հոկտեմբերի 1-ից երեխաները կկարողանան դասերն անցկացնել դասասենյակներում: Իսկ մյուս բնակավայրերում, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի եւ առողջապահության նախարարությունների համատեղ մշակած հատուկ հանձնարարականների ուղղորդմամբ՝ ուստարին կմեկնարկի դասասենյակներից, առողջապահության նախարարության կանոնակարգերի սահմանած միջավայրում:

Թանկագին մանկավարժներ, ուսանողներ, դպրոցականներ, ծնողներ, շնորհավորում ենք նոր ուսումնական տարվա առաջին օրը: Ցանկանում ենք, որ այն ձեզանից յուրաքանչյուրի համար լինի արգասաբեր եւ ուղեկցվի նշանակալի հաջողություններով: Մեր առանձնահատուկ շնորհավորանքն ենք հղում առաջին դասարանցիներին, ովքեր միշտ կհիշեն իրենց աշակերտական կենսագրության առաջին օրը եւ առաջին դպրոցական զանգը: Վրաստանի կրթական ողջ համակարգի նպատակը երկրում բնակվող յուրաքանչյուր աշակերտի եւ ուսանողի լիարժեք կրթություն ստանալն է:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱՆ

Ահա եւ մեկնարկում է ուսումնական տարին՝ երկարասպաս ու նորովի: Ցավոք, մեկնարկում է ոչ բոլոր դպրոցներում: Այս տարի արտասովոր է ամեն ինչ, որովհետեւ համավարակն իր պայմաններն է թելադրում ահա արդեն երկար ու հոգնատանջ ամիսներ՝ չշրջանցելով մեր կյանքի թերեւս ամենակարեւոր օղակը՝ կրթությունը:

Մեր մունիցիպալիտետում վարակի տարածման վտանգն այս պահին չկա, ուստի Վրաստանի միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, դպրոցներն իրենց աշխատանքը սկսում են սեպտեմբերի 15-ին, համենայնդեպս, այս պահի դրությամբ, քանի որ ժամ առ ժամ կառավարության որոշումները ենթակա են փոփոխման՝ ելնելով համաճարակային իրավիճակից: Իհարկե, բոլորին հայտնի են հանձնարարականները, որոնք կիրառվելու են առաջին ու հետագա օրերին, եւ մենք հնարավորինս պատրաստ ենք դրանց:

Մինչ երեխաները տանն էին, մունիցիպալիտետի շատ դպրոցներում աշխատանքը չէր դադարում: Այս տարի եւս Վրաստանի կրթության ու գիտության նախարարությունը տեղի դպրոցների կարիքները հոգալու համար հատկացրեց 560 հազար լարի: Առաջնային համարեցինք հույժ կարեւոր՝ դպրոցների սանհանգույցների կառուցումը եւ կամ վերանորոգումը: Մանավանդ, որ COVID-19-ի կանխարգելման նպատակով, մեծ ուշադրություն է դարձվում Վրաստանի բնակչության, այդ թվում՝ դպրոցական տարիքի երեխաների սանիտարահամավարակային անվտանգության ապահովմանը, հիգիենիկ նորմատիվների մշակմանը եւ կիրարկման կարգին ու պայմաններին: Այսպես, Նինոծմինդայի մունիցիպալիտետի մի շարք գյուղերի հանրակրթական դպրոցներում 2020 թվականին արդեն կառուցվել եւ մինչեւ սեպտեմբերի 29-ը շահագործման կհանձնվի Ղուլալիսի, Մեծ Գոնդուրայի, Ժդանովականի եւ Մեծ Խանչալիի սանհանգույցները: Ընթացքի մեջ է եւս 9 դպրոցի նախագծային հաշվարկ, եւ աշխատանքները կսկսվեն մոտ ժամանակներում: Իսկ չորսը գյուղերի՝ Մամզարայի, Հեշտիայի թիվ 1, թիվ 2 եւ Օրոջալարի դպրոցների սանհանգույց կառուցելու աշխատանքների համար մրցույթ է հայտարարված:

Այնպես որ, համաշխարհային այս ճգնաժամը փորձում ենք դրական տեսաշարժով արձանագրել:

Կրթական ոլորտի սիրելի ներկայացուցիչներ, հեռավար, թե դասասենյակներում ուսումնական տարին մեկնարկում է: Ու չնայած նրա, որ 2020 թվականը չի դադարում ոչ դրական անակնկալներ մատուցել, առավել քան երբեւէ մեզ ամրություն ու անսասան առողջություն է հարկավոր՝ խնայենք մեզ ու իրար՝ այս դժվար օրերը միասիան հաղթահարելով:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ
Նինոծմինդայի քաղաքապետ

ԱԽԱԼՑԻԽԵԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԸ 14 ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ ՈՒՆԻ

Համավարակով պայմանավորված գլոբալ բնույթ կրող այս անորոշ օրերում իսկապես դժվար է նախորդ տարիների խանդավառությամբ շնորհավորել ուսումնական մեկնարկը, բայցեւ անհնար է շնորհակալ չլինել Վրաստանի կառավարությանը երկրում վարակի տարածումը հնարավորինս կանխարգելելու ու, այդուհանդերձ, ուսումնական մեկնարկը հայտարարելու համար:

Հիմա հերթը մերն է՝ Վրաստանի բոլոր քաղաքացիներինս: Ուսումնական տարին սկսելու ենք անձնական պատասխանատվությամբ, եւ այս պարագայում ոչ միայն ուսուցիչը, այլեւ առաջինից տասներկուերորդ դասարանցին:

Ախալցիխեի մունիցիպալիտետում 13 հայկական դպրոց է գործում: Նոր ուսումնական տարվա առաջին դասարանցիների ընդհանուր թիվը այս տարի 123 է:

Ուրախությամբ ուզում ենք փաստել, որ նախորդ ուստարվա 77 շրջանավարտներից 14-ը ոսկե մեդալակիր է, 3-ը՝ արծաթե: Չնայած հեռավար ուսուցման որոշակի խափանումների, մեր մունիցիպալիտետից 2020 թվականի Ազգային միասնական քննություններին մասնակցած դիմորդներից 31-ն արդեն ուսանող է, իսկ 3-ը բարձրագույնը Հայաստանում են շարունակելու: Մնացածներն իրենց բարձրագույն կրթությունը ստանալու են Վրաստանի տարբեր բուհերում: Ուրախությամբ նշեմ, որ ուսանողներից 15-ը հարյուր տոկոսանոց դրամաշնորհ են ստացել: Շատ կուզեի թվել նրանց անունները. նախ՝ որպես խթան մյուսների համար, եւ հետո, ո՞վ գիտի՝ ապագայում քանիսն են ծառայելու մեր երկրին, ու ո՞ր բնագավառում կհանդիպենք նրանց անուններին: Այսպես, վրացական բուհերում Ախալցիխե քաղաքի թիվ 3 հանրային դպրոցից 9 շրջանավարտ ուսանելու է անվճար՝ Մերուժան Թադեւոսյանը, Անժելա Ոսկանյանը, Օֆելյա Գրիգորյանը, Սուսաննա Գրիգորյանը, Հռիփսիմե Եղյանը, Լեւոն Պետրոսյանը, Լարիսա Առաքելյանը, Մարգարիտա Տինոյանը, Սերգեյ Մուրադյանը, Ծուղրութ գյուղի հանրային դպրոցից չորս շրջանավարտ՝ Խորեն Կարապետյանը, Ալիսա Պապոյանը, Վարդուհի Բաղդասարյանը, Լիանա Ինջոյանը, Սազել գյուղի հանրային դպրոցից՝ Ամալյա Նահապետյանը, իսկ Փոքր Պամաճից մեկ աշակերտ՝ Կարեն Նազարեթյանը: Հուսով եմ, համավարակը առավել կպարտադրի ձեզ արժանի մասնագետ դառնալ, մենք չգիտենք, թե կյանքի ո՞ր հատվածում՝ ի՞նչ մարտահրավերի առաջ կկանգնենք, եւ միգուցե հենց մեր գիտելիքը կդառնա կարեւոր զենք խնդրի հաղթահարման ճանապարհին:

Շնորհավոր, նոր ուսումնական տարի, նվաճումներ, ձեռքբերումներ եւ բարի ծառայություն ձեր օրրանին ու երկրին:

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ախալցիխեի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ

ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

2020-2021 ուստարվա մեկնարկի կապակցությամբ Վրաստանի կրթության եւ առողջապահության նախարարությունները մշակել են հանձնարարականներ, որոնք պարտադիր կարգով պետք է պաշտպանվեն:

Աշակերտների միջեւ պահպանել 1 մետր հեռավորություն.

Շենք մուտք գործող ցանկացած անձի համար պարտադիր է կրել պաշտպանիչ դիմակ, բացառությամբ աշակերտի.

Շենք մտնող ցանկացած անձ պետք է անցնի ախտահանիչ լուծույթով ներծծված գորգով, անցնի ջերմաչափում եւ ախտահանի ձեռքերը.

Դպրոցներում պետք է լինի պաշտպանիչ դիմակների պահեստ.

Սանիտարական հանգույցի մշակում յուրաքանչյուր դասամիջոցին.

Հերթափոխների միջեւ կես ժամ ընդմիջում, դասասենյակների սանիտարական մաքրում եւ օդափոխում.

Ջերմություն կամ շնչառական խնդիրներ ունեցող աշակերտների համար ժամանակավոր մեկուսացման սենյակի հատկացում.

Սենյակների օդափոխում՝ դասաժամերի միջեւ՝ դասամիջոցներին.

Հաճախ շոշափելիք մակերեւույթների սանիտարական մշակում.

Դպրոցի ընդհանուր շահագործման տարածքում (այդ թվում՝ միջանցք, ուսուցչանոց եւ այլն) գտնվող ցանկացած անձ (բացառությամբ՝ աշակերտների) պետք է կրի պաշտպանիչ դիմակ, այդ թվում՝ դասամիջոցին:

Ուսումնական գործընթացը ծրագրելիս՝ դպրոցները հնարավորություն կունենան.

Սահմանել դասաժամի տեւողությունը (առնվազն 30 րոպե)

սահմանել դասաժամի մեկնարկի գործընթացն ըստ դասարանների (08:30, 08:45, 09:00):

Դպրոցներն հաշվի առնելով իրենց անվտանգությունը եւ ենթակառույցը, կարող են ներդնել ուսման իրենց («հիբրիդային մոդել», այսինքն՝ ուսուցում ինչպես դասասենյակներում, այնպես էլ՝ հեռավար) մոդելը:

Կրթության նախարարությունը դպրոցի տարածքում դասերի անցկացումը պարտադիր է սահմանել I-IV դասարանի աշակերտների համար:

Դպրոցի վարչության կողմից անհրաժեշտության դեպքում խառը մոդել ներդնելիս՝ V-VI դասարաններում հեռավար ուսուցումը հնարավոր է շաբաթը առավելագույն մեկ օր, VII – XI դասարանի աշակերտների համար առավելագույնը երկու օր, իսկ XII դասարանցիների համար՝ առավելագույնը երեք օր: Ուսուցման խառը մոդել ներդնելու դեպքում, այն պետք է համաձայնեցված լինի Վրաստանի ԿԳ նախարարության հետ:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Կողմնակի գնահատում

Երեխան, առաջին դասարան ընդունվելով, դառնում է մեծ սոցիալական կառույցի՝ դպրոցի մի մասնիկը: Նրա վարքը, առաջադիմությունը եւ վրիպումները պարբերաբար գնահատման են ենթարկվում ինչպես համադասարանցիների, այնպես էլ՝ ուսուցիչների կողմից: Իսկ շրջապատողների ցանկացած կարծիք երեխան կարող է բավականին լուրջ վերապրել:

Որպեսզի երեխաներին հեշտ լինի համակերպվել դպրոցական կյանքին, ուշադրություն դարձրեք նրանց վարքին եւ ձեր վերաբերմունքն արտահայտեք դրա նկատմամբ: Հակառակ դեպքում, նրանք չեն հասկանա՝ ինչպես դրսեւորեն իրենց: Այդուհանդերձ, գնահատեք ոչ թե երեխային, այլ նրա արարքը: Օրինակ՝ «Դու սարսափելի վատ ես գրում»-ի փոխարեն, ասեք. «Ես սրտնեղում եմ, երբ դու չես ձգտում գեղեցիկ գրել»: Այդ ժամանակ երեխան ինքնուրույն կսկսի փոխել իր վարքը, որպեսզի համապատասխանի որոշակի նորմերի ու կանոնների:

Լինել հավասար

Այժմ ձեր երեխան աշակերտ է: Նա դրանով շատ է հպարտանում եւ հարգալից վերաբերմունք է պահանջում իր նկատմամբ: Դուք էլ երեխային վերաբերվեք որպես մեծի՝ մի պարտադրեք, այլ խորհուրդ տվեք: Վստահ եղեք, նա դա կգնահատի:

Աջակցություն

Երեխային կատարած հանձնարարության մասին ձեր կարծիքը մինչ կասեք, հարցրեք, թե ինչպես է ինքն իրեն վերաբերվում: Բոլոր դեպքերում գտեք երեխային գովելու առնվազն երեք պատճառ եւ միայն մեկը, որ կարելի է բարելավել եւ ինչպես: Այսպես չի տուժի երեխայի ինքնագնահատումը, եւ նա կձգտի հաջողության:

Ձեր մասնակցությունը

Երեխան դպրոցից տուն է գալիս զգացողություններով լի: Ինչ-որ մեկը նեղացրել է կամ ընդհակառակը՝ գովաբանել է: Ժամանակ գտեք դպրոցական նորությունները քննարկելու համար. ուշադիր լսեք ձեր տղային կամ աղջկան, զգացմունքով արձագանքեք:

Եթե դուք խոսելու ժամանակ չունեք, երեխային այդ մասին անպայման ասեք: Կիսականջ լսել, զուգահեռաբար այլ գործով զբաղվել պետք չէ, երեխան, միեւնույն է, կնկատի ու կտխրի: Ավելի լավ է պայմանավորվեք, որ կզրուցեք ընթրիքից հետո: Այս ձեւով դուք կընդգծեք նրա ապրումների կարեւորությունը, եւ ձեր բոլոր գործերն ավարտելուց հետո կկարողանաք երեխայի հետ հանգիստ խոսել:

Խորհուրդ մայրիկներին

** Առաջին դասարանցին առնվազն 10-11 ժամվա քնի կարիք ունի: Գործունեության տեսակները եւս հաճախ փոխելու կարիք ունի, օրինակ՝ ակտիվ խաղից անցնել նկարչության կամ ծեփակերտման:*

** Ցանկալի չէ երեխային առաջին օրերից երկարօրյա խմբում թողնել: Նրան նոր դերին ընտելանալու ժամանակ տվեք:*

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

COVID - 19

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՍԿՍՎՈՒՄ Է ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ, ԹԵԵՎ ԽՈՒՀԱՊԻ ԱՌԻԹ ՉԿԱ, ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կորոնավիրուսով վարակման դեպքերի ավելացման կապակցությամբ վարչապետը կրկին անդրադարձավ սահմանափակումների թեմային՝ նշելով, որ առանձին սահմանափակումների վերացումը յուրովի խթանեց վարակի տարածումը: Մասնավորապես, Թբիլիսիում անցկացված հարսանիքներից մեկի ժամանակ բացահայտվել է վարակման հինգ նոր պլաստեր:

- Ցավոք, գիտակցում ենք, որ սահմանափակումները մեր քաղաքացիների շրջանում առաջացնում են անհարմարություն, եւ բացառված չէ վրդովմունքը: Սակայն հատկանշականը նաեւ այն է, որ Թբիլիսիում անցկացված հարսանիքներից մեկում (չեմ նշի, թե որ ռեստորանում), փաստորեն հայտնաբերվեց վարակման հինգ նոր պլաստեր Ցագերիից, Քութայիսիից, Զուգդիդիից եւ այլն: Այնպես որ, այդ վայրերում հնարավոր է վարակման նոր ալիք: Մենք ստիպված ենք կրկին դիմել խստիվ միջոցների, արգելել ծիսակատարման միջոցառումները, որտեղ կլինեն տասից ավելի մարդիկ,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Անդրադառնալով կորոնավիրուսի համավարակի պայմաններում ընտրական քարոզարշավի թեմային՝ վարչապետը նշեց, որ սահմանափակումները չեն առնչվում նախընտրական քարոզարշավին:

Միաժամանակ վարչապետը նշեց, որ կոնկրետ քայլեր են ձեռնարկվում նաեւ երկիր մուտք գործելու գործընթացի դյուրինացման ուղղությամբ: Կոնկրետ, Գիորգի Գախարիայի խոսքով, երկիր մուտք գործելու պայմաններում պարտադիր կարանտինային պահանջը, 14 օրվա փոխարեն, այսուհետեւ կլինի 8 օր:

- Կարանտինի օրերը կրճատում ենք, որպեսզի թեթեւացնենք մեր քաղաքացիների, ինչպես նաեւ հյուրերի լրացուցիչ անհարմարությունը: Այս որոշմամբ մենք կրճատում ենք կարանտինի օրերի քանակը եւ ավելի շատ ազատություն ենք տալիս մեր քաղաքացիներին, որպեսզի ինչքան հնարավոր է շուտ եւ առողջ վերադառնան իրենց ընտանիքներ,- ասաց Գիորգի Գախարիան՝ հավելելով, որ կարանտինի 9-րդ օրը, PCR թեստի բացասական արդյունքի դեպքում, քաղաքացիները կլքեն կարանտինային գոտին, սակայն 12-րդ օրը եւս մեկ PCR թեստ հանձնելու պարտավորություն կունենան:

Ինչպես ընդգծեց Գիորգի Գախարիան, Վրաստան մուտք գործող օտարերկրյա քաղաքացիները պարտավոր են PCR թեստի պատասխանը ներկայացնել 72 ժամվա ընթացքում: Այդ պահանջը տարածվելու է այն երկրների քաղաքացիների վրա, որտեղից մարդիկ ժամանել են վերադարձի հիմունքներով, այսինքն՝ նրանց համար սահմանափակումներ չեն սահմանվել:

- Սեպտեմբերի 15-ից Վրաստան մուտք գործող բոլոր օտարերկրացիները, ներառյալ նրանք, ովքեր փոխադարձ հիմունքներով պարտավոր չէին դա անել, եւ ովքեր ազատ մուտք էին գործում երկիր, պետք է իրենց հետ ունենան 72-ժամյա PCR թեստի պատասխանը, որն անհրաժեշտ է, որպեսզի մենք բոլորս, մեր գործընկերների եւ համագործակիցների հետ միասին, ապահովենք մեր քաղաքացիների, այդ թվում՝ հյուրերի առողջությունը եւ ավելի արդյունավետ կառավարենք վարակի տարածումը: Ես ուզում եմ մեկ անգամ եւս շեշտել, որ սա վերաբերում է այն երկրներին, որոնք փոխադարձության սկզբունքի սահմանափակումներ չունեն, դրանք մեր կողմից ներկայացնելու են նույն պահանջը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵՆՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՆ

ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը զգուշացնում է, որ աշխարհը պետք է պատրաստ լինի հաջորդ համավարակին:

«Սա չի լինելու վերջին համավարակը: Պատմությունը սովորեցնում է, որ համավարակները կյանքի մասնիկ են: Սակայն երբ կգա հաջորդ համավարակը, աշխարհը պետք է պատրաստ լինի դրան»,- ասված է կազմակերպության հայտարարության մեջ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. 28 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է 1 ՄԻԼԻՈՆԻ

Աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 28 330 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 913 935 հազարը: Ապաքինվել է 20 միլիոն 346 021 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է գտնվում **ԱՄՆ-ը,** որտեղ հաստատված **6 588 181** դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **196 331** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **4 562 414**-ի, մահացածներինը՝ **76 304**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ վարակվել է **4 239 763**, մահացել՝ 129 575 մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **1 046 370**, վարակի հետեւանքով մահացել՝ **18 263** մարդ:

Պերուում վարակվել է **710 067**, վարակի հետեւանքով մահացել՝ **30 344** մարդ: **Կոլումբիայում** վարակվել է **694 664**, վարակի հետեւանքով մահացել՝ **22 275** մարդ: Կոլումբիային հաջորդում են Մեքսիկան, Հարավային Աֆրիկան, Իսպանիան եւ Արգենտինան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **45 503**-ի, մահացածներինը՝ **909**-ի, ապաքինվածներինը՝ **41 434**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **37 874** մարդ: Վարակից մահացել է **556**, ապաքինվել՝ **35 269** մարդ:

Սեպտեմբերի 11-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **1 917,** մահացել՝ **19**, ապաքինվել՝ **1354** մարդ:

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՁԵ. «ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՆՔ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ ԴԱՍԸՆԹԱՑՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

Պարզաբանելով սեպտեմբերի 11-ին միջգերատեսչական խորհրդի կողմից ուստարվա մեկնարկը խոշոր քաղաքներում երկու շաբաթով հետաձգելու մասին ընդունած որոշումը՝ Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն հայտարարեց, որ հետաձգումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ մեծ քաղաքներում մարդկանց շարժունակությունը շատ ավելի բարձր է, եւ այստեղ համացանցի բարձր մակարդակի կապակցությամբ, հնարավոր է ուսուցումը սկսել հիբրիդային մեթոդով: Նրա խոսքով, մեծ քաղաքներում ուսումնական մեկնարկի հետաձգումը չի արգելակի ուսուցման ընթացքը:

- Բոլորին հայտնի է, որ վերջին յոթ ամսվա ընթացքում, սեպտեմբերի 11-ին վավերացվել է վարակումների ռեկորդային թիվ՝ 87: Ճիշտ է, անցած ժամանակահատվածում մենք նշանակալի աշխատանքներ կատարեցինք, ինչպես հոսպիտալային, այնպես էլ՝ առաջնային առողջապահության մակարդակով, առանձին սահմանափակումները փոխհամաձայնությամբ վերացվեցին, ավելացվեց լաբորատորիայի հզորությունը, ինչը արտակարգ նշանակալից է աշնան եւ ձմռան ժամանակահատվածների համար, երբ սպասելի է վարակման դեպքերի աճ,- հայտարարեց առողջապահության նախարարը:

ՊԱԱՏԱ ԻՄՆԱՁԵ. «ՑԱՎՈՔ, ՄԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՄՈՌԱՑԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ»

«Իմեդի» հեռուստալիքով իր ելույթում Վրաստանի հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի փոխտնօրեն Պաատա Իմնաձեն երկրում կորոնավիրուսով վարակի դեպքերի ավելացումը առնչվեց հանձնարարականների չկատարման հետ եւ հայտարարեց, որ ցավոք, մեր քաղաքացիների մի մասը մոռացել է կորոնավիրուսի մասին:

- Եթե պահպանվեին տարրական խորհուրդները, որոնք այսքան ժամանակ տալիս ենք՝ սովորել ապրել վարակի հետ, հանրային հավաքատեղիներում, փակ տարածքներում դիմակ օգտագործել, պահպանել հեռավորություն... Վրացի ենք, բոլորս էլ եղել ենք հարսանիքի, իհարկե, հեռավորություն չես պահպանի, սակայն պարտադիր չէ հարսանիքը 300 հոգանոց լինի: Դրա արդյունքը կտեսնենք,- հայտարարել է Իմնաձեն:

Նշենք, որ միայն վերջին երկու օրվա ընթացքում վավերացվել է համապատասխանաբար՝ 57 եւ 87 վարակման դեպք: Թվերի կտրուկ աճը վարակաբանները կապում են Թբիլիսիում եւ Բաթումիում անցկացրած հարսանիքների եւ խանութներում հակահամաճարակաբանական ցուցումների խախտումների հետ:

ԱՐԳԵԼՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՐԿԻՆ ԿԳՈՐԾԱՐԿՎԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին օրերին Վրաստանում կորոնավիրուսով վարակի դեպքերի ավելացման պատճառով, կառավարությունում գործող միջգերատեսչական խորհուրդը մի քանի սահմանափակող որոշումներ ընդունեց, որոնցից երկուսը ուժի մեջ մտան անմիջականորեն.

Մասնավորապես, սեպտեմբերի 10-ից Վրաստանում արգելվում է ծննդյան տոների, հարսանիքների, թաղման եւ այլ ծիսական արարողությունների անցկացումը: Արգելքը վերաբերում է ինչպես փակ, այնպես էլ՝ բաց տարածքներում միջոցառումներ անցկացնելուն:

Ընդունած որոշման մեջ կառավարության պարզաբանմամբ՝ ամուսնությունն ինքնին որպես իրադարձություն չի արգելվում, եւ սահմանափակումները տարածվելու են միայն միջոցառման տոնակատարությանը վերաբերող մասի վրա: Մասնավորապես, հարսանիքի մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 10-ը: Ծննդյան, տոնակատարությունների, թաղման եւ այլ հասարակական միջոցառումների մասնակիցների թիվը եւս պետք է լինի ոչ ավելի, քան 10 մարդ:

Սեպտեմբերի 10-ից ուժի մեջ է մտնում նաեւ երկրորդ արգելքը, ըստ որի, բաց տարածքներում արգելվում է 200 մարդուց ավելի սպորտային եւ մշակութային միջոցառումների անցկացումը: Արգելվել է գիշերային ակումբների գործունեությունը ինչպես փակ, այնպես էլ՝ բաց հրապարակներում, մինչեւ հոկտեմբերի 1-ը հետաձգվում է կինոթատրոնների եւ թատրոնների բացումը, հոկտեմբերից շուտ չի վերականգնվի նաեւ մանկական ժամանցի կենտրոնների աշխատանքը:

Մինչեւ հետաձգվում է մանկապարտեզների ուսումնական տարվա մեկնարկը, պահպանվում է հասարակական տրանսպորտում դիմակներ կրելու պարտադիր պահանջը:

Կառավարության հայտարարության համաձայն, կանոնակարգերը չպահպանելու համար կգործեն համապատասխան պատժամիջոցներ, եւ անհրաժեշտ է, որ հասարակությունը ցուցաբերի բարձր քաղաքացիական պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉՈՐՍ ԱՄՍՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ԿԱՐԱՆՏԻՆ

Հայաստանի կառավարության որոշմամբ, 2020թ. սեպտեմբերի 11-ից 2021 թվականի հունվարի 11-ը ներառյալ, երկրում սահմանվել է կարանտին:

Ինչպես ասված է պաշտոնական հաղորդագրության մեջ, վերոնշյալ որոշումն ընդունվել է՝ հաշվի առնելով այն, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թվականի մարտին հայտարարել էր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված համավարակ, եւ ամբողջ աշխարհում համավարակային իրավիճակը շարունակում է մնալ լարված: Այն, որ Հայաստանում եւս հիվանդությունը ստացել է լայնածավալ տարածում, եւ երկրում առաջացել է համավարակ՝ հիմք հանդիսանալով արտակարգ իրավիճակի առաջացման, հաշվի առնելով նաեւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախազգուշացումը համավարակի երկրորդ ալիքի վտանգի մասին, կարեւորելով բնակչության առողջության պահպանման եւ առողջական վիճակի բարելավման նպատակով համապատասխան կանխարգելիչ ու հակահամավարակային միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, ընդունվել է որոշում կարանտին հայտարարելու մասին:

ԿԱՐԱՆՏԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Հայաստանում կարանտին սահմանելու կառավարության որոշման հավելվածում ներկայացված են կարանտինի ընթացքում կիրառվող սահմանափակումներն ու միջոցառումները:

Մասնավորապես, հանրային միջոցառումները թույլատրվում են միայն հետեւյալ սահմանափակումներով՝ տոնական եւ հիշատակի միջոցառումները, ներառյալ՝ ծննդյան (տարեդարձի), հարսանյաց (նշանադրության) միջոցառումները, հոգեհանգստի եւ հուղարկավորության արարողությունները՝ 60-ից ոչ ավելի անձանց մասնակցությամբ. անձանց սոցիալական, մշակութային, կրթական, սպորտային կամ այլ ժամանցային կարիքների բավարարմանն ուղղված այլ միջոցառումները (այդ թվում՝ համերգները, ցուցահանդեսները, ցուցադրությունները, թատերական ներկայացումները, կրթական այլ միջոցառումներ), եթե վերջիններս տնտեսական գործունեության տեսակներ չեն, 60-ից ոչ ավելի անձանց մասնակցությամբ:

Տնտեսական գործունեության առանձին տեսակների, ծառայությունների մատուցման եւ տնտեսական գործունեությամբ չզբաղվող կազմակերպությունների գործունեության իրականացումը թույլատրվում է միայն լիազոր մարմնի կողմից սահմանված համապատասխան սանիտարահամավարակային անվտանգության կանոնների պահպանված լինելու դեպքում:

Բոլոր ուսումնական հաստատություններում եւ արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպություններում ուսումնական գործընթացը կարող է իրականացվել միայն լիազոր մարմնի կողմից սահմանված համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանված լինելու դեպքում:

Հավաքներ կազմակերպել, անցկացնել եւ հավաքներին մասնակցել թույլատրվում է միայն սահմանված անհատական պաշտպանության միջոցների կիրառման ու անձանց միջեւ նվազագույնը 1,5 մետր հեռավորության պահպանման դեպքում:

Բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս եւ տեղաշարժվելիս՝ անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՉԿԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կարծում եմ, որ հսկիչ դրամարկղային մեքենաներով (ՀԴՄ) առեւտրի շրջանառության տվյալը կարող է այդ մասին վկայել, որովհետեւ մարդկանց կողմից արվող առեւտրի մասին է: 2020-ի օգոստոսին, 2019-ի օգոստոսի համեմատ, ՀԴՄ շրջանառությունը նվազել է ընդամենը 2,5 տոկոսով: Ընդ որում, այս ցածր ցուցանիշին նոր ենք հասել, մարտից սկսած այդ ցուցանիշը բարձր էր, այժմ նվազում է: Այս թիվն ինքնին պետք է վկայի, որ այո՛, ունենք խնդիրներ, բայց սոցիալական կոլապս եւ սոցիալական ճգնաժամ չունենք,- ասաց վարչապետը:

Նրա դիտարկմամբ, Հայաստանում սոցիալական ճգնաժամ տեղի չի ունեցել նաեւ կառավարության քայլերի շնորհիվ, որովհետեւ հակաճգնաժամային ծրագրերի իրականացման շրջանում տնտեսություն է ներարկվել 163,4 մլրդ դրամ:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ՝ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

«Իմ քայլը» հիմնադրամն արտասահմանյան լավագույն համալսարաններում ուսանելու համար կրթաթոշակներ է շնորհել հայ երիտասարդներին:

«Իմ քայլը» հիմնադրամի Կրթաթոշակային ծրագրի 2020թ. 45 կրթաթոշակառուներին հավաստագրերի հանձնման արարողությունը տեղի է ունեցել Օշականի մշակույթի պալատում:

Կրթաթոշակառուներին հավաստագրերի հանձնման արարողությանը ներկա էին Հայաստանի վարչապետի տիկին, «Իմ քայլը» եւ «City of smile/Ժպիտների քաղաք» բարեգործական հիմնադրամների Հոգաբարձուների խորհրդի նախագահ Աննա Հակոբյանը, «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն Հովհաննես Ղազարյանը, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Հիմնադրամի բարերարներ, Հոգաբարձուների խորհրդի անդամներ եւ տարբեր տարիների կրթաթոշակառուներ:

Միջոցառման վայրի ընտրությունը պատահական չի եղել. Օշականի մշակույթի պալատն այն տասը մշակութային տներից մեկն է, որ ընդգրկված է «Իմ քայլը» հիմնադրամի «Մարզային մշակութային հաստատությունների հզորացում եւ համայնքներում նրանց դերի վերահիմաստավորում» ծրագրում: Ծրագրով նախատեսվում է մշակույթի տների ենթակառուցվածքների բարեկարգում ու մարդկային ռեսուրսների հզորացում:

800 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագրի կատարման բնականոն ընթացքն ապահովելու նպատակով, Հայաստանի կառավարությունն ընդունեց համապատասխան որոշում:

Ըստ այդմ, նախատեսվում է Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի անվտանգության բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը հատկացնել 800 մլն դրամ:

Որոշման նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2019թ. նոյեմբերի 27-ին եւ դեկտեմբերի 4-ին ստորագրված՝ «Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագիր» Հարեւանության ներդրումային գործիքի ներդրումային դրամաշնորհային համաձայնագրի շրջանակում ընտրված կապալառու կազմակերպությունների կանխավճարները տրամադրելու, ինչպես նաեւ նախատեսվող երկու նոր մրցութային գործընթացների արդյունքում ընտրված կապալառու կազմակերպությունների կանխավճարները տրամադրելու պատվիրատուի պարտավորության կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ

Սեպտեմբերի 10-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, որն իր արշակուրդի մի մասն անցկացնում է արտերկրում, Լոնդոնում հանդիպեց Միացյալ Թագավորության Եվրոպական հարեւանության եւ Ամերիկայի հարցերով մշտական նախարար Ուենդի Մորթնի հետ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց երկու երկրների միջեւ համագործակցության զարգացման ու խորացման հեռանկարներին: Ուենդի Մորթնը նշեց, որ հաջորդ տարի Միացյալ Թագավորությունը նախատեսում է հյուրընկալել Կլիմայի փոփոխության 26-րդ գագաթաժողովը (COP26), որին ակնկալվում է նաեւ Հայաստանի մասնակցությունը: Իր հերթին, Արմեն Սարգսյանը անդրադարձավ Հայաստանում հաջորդ տարի նախատեսվող STARMUS 6-րդ միջազգային փառատոնին, ամենամյա «Մտքերի հայկական գագաթաժողով»-ին եւ նախարար Մորթնին հրավիրեց մասնակցելու այդ միջոցառումներին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է «Ի ԳՈՐԾ» ԾՐԱԳԻՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանում սկսեց գործել Հայաստանի վարչապետին առընթեր Սփյուռքի հարցերով գլխավոր հանձնակատարի աշխատակազմի նախաձեռնած, սփյուռքահայ մասնագետներին երկրի կառավարման համակարգում տեղավորելու «Ի Գործ» ծրագիրը: Առաջին փուլի արդյունքներով, թվով 24 մասնագետներն արդեն Հայաստանում են: Կանադայից, Դանիայից, Ռուսաստանից, Լիբանանից, Ֆրանսիայից, Նորվեգիայից մինչեւ Իսրայել, Նիդերլանդներ ու Չինաստան. նրանք արդեն միացել են Հայաստանի կառավարության աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ, շուրջ 100 մասնագետներ սփյուռքից կհամալրեն պետական կառավարման համակարգը՝ բերելով իրենց հետ արտասահմանյան փորձն ու խորացնելով, թե՛ գործընկերների, թե՛ իրենց մասնագիտական գիտելիքները:

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ԼԻԲԱՆԵԱՆԱՀԱՅԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Հայաստան» համահայկական հիմնադրամն ամփոփեց «Անհետաձգելի օգնություն լիբանանահայերին» դրամահավաք-արշավը, որի արդյունքում հավաքագրվել էր շուրջ 312 000 ԱՄՆ դոլար:

«Հանգանակությունը փոխանցելիս՝ դրամահավաք-արշավին միացավ նաեւ «Տաշիր» բարեգործական հիմնադրամը՝ նվիրաբերելով 100 000 ԱՄՆ դոլար: Այսպիսով, հավաքագրված գումարը կազմում է 412 000 ԱՄՆ դոլար, որից 310 000 դոլարը համամասնաբար բաշխվում է Լիբանանում գործող կրթական հաստատությունների ուսուցիչների 2020-2021 թթ. ուսումնական տարվա 1-ին եռամսյակի աշխատավարձ վճարելու նպատակով: Ավելացված 100 000 դոլարը կտրամադրվի կրթական ծրագրերի իրականացմանը: Միեւնույն ժամանակ, հավաքագրված գումարից 13 000 դոլար կտրամադրվի Լիբանանում գործող «Արարատ», «Զարթոնք», «Ազդակ», «Վանա ձայն», «Ռադիո Սեւան» լրատվամիջոցներին», - ասված է հաղորդագրության մեջ:

ՉՓՈԽՎԵՑ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ ՏՈՒԺՊԵՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Սեպտեմբերի 8-ին Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը անդրադարձավ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտպան Հայկ Ալումյանի դատակոչի ցուցակում ներառված 102 հոգուն՝ որպես գործով վկա հրավիրելու միջնորդությանը:

Մեղադրող կողմը ոչ հիմնավոր համարեց պաշտպանների ներկայացրած փաստարկները եւ առարկեց միջնորդության դեմ: Դատական նիստին տուժողներն ու նրանց ներկայացուցիչները չեն ներկայացել:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

13.09.2020 Խաչվերաց

Խաչվերացը Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Հայաստանյայց եկեղեցում Խաչվերացը տոնում են սեպտեմբերի 11-17-ն ընկած ժամանակահատվածում հանդիպող կիրակի օրը: Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցման: Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց:

Տոնի նախօրեին՝ շաբաթ օրը, կանայք խմորեղեն են պատրաստում, տղամարդիկ՝ ուլ մորթում ու գորովի պատրաստում:

Շատ տեղեր Խաչվերացը՝ «Սըբխեչը» ընկալում են որպես աշնանամուտ: Ինչպես ասում էին քեսապցիները՝ «Խաչ, վերմակը առ, ներս փախիր»,- այսինքն՝ բացօթյա գիշերողներն այլեւս տանն են գիշերում:

Խաչվերացի հաջորդ օրը մեռելոց է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ, կատարվում է հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՄԱՆԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍ

Սեպտեմբերի 5-ին, Թբիլիսիի քաղաքապետարանի աջակցությամբ, Մուշտայիդի այգում անցկացվեց Թբիլիսիի մանկական փառատոն, որի շրջանակներում ծնողներին հնարավորություն տրվեց մասնակից ընկերություններից հատուկ ծառայություններ ստանալ հատուկ գնով:

Բացի այդ, նրանք ծանոթացան տարբեր նորույթների հետ, իսկ երեխաները մասնակցեցին զվարճալի ու ստեղծագործական գործունեությանը:

Փառատոնի գործողությունները բաժանված էին վեց գոտում՝՝ մարզական, կրթության, առողջության, զվարճանքի, մանկական ստարտապների եւ մշակութային:

Փառատոնի ընթացքում ներկայացվել են նաեւ սպորտի, արվեստի եւ կրթության ոլորտներում քաղաքային ծրագրեր:

Միջոցառմանը ներկա էր Թբիլիսիի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչության պետ Իրակլի Գվիլավան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ

Թբիլիսիում գործող երիտասարդ, թեեւ արդեն ճանաչում վայելող տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանի տիկնիկային թատրոնը սեպտեմբերի 5-6-ը Ախալքալաքիում եւ Ախալցիխեում անվճար ներկայացրեց երաժշտական հատվածներ տարբեր ներկայացումներից:

Նշենք, որ այս հյուրախաղերը տարածաշրջանում առաջինն էին 2018 թվականին հիմնադրված Արմեն Հովհաննիսյանի տիկնիկային թատրոնի գործունեության ընթացքում: Հյուրախաղերը կազմակերպվել էր «Վրացահայերի միության» նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ, հասարակական ինտեգրման ծրագրի շրջանակներում:

ՍՊՈՐՏ

ՌԵԳԲԻ. ՎՐԱՍՏԱՆԸ ԽԱՂԱԼՈՒ Է 8 ԱԶԳԵՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ռեգբիի ֆեդերացիան, պաշտոնապես հաստատվել է, որ Վրաստանի հավաքականը նոյեմբերին մասնակցելու է 8 ազգերի մրցաշարին, որի մասնակիցների թվում են համաշխարհային ռեգբիի այնպիսի գրանդներ, ինչպսիք են Անգլիան, Իռլանդիան, Ուելսը եւ այլն:

Ավելացնենք, որ Վրաստանը հնարավորություն ստացավ մասնակցելու այս մրցաշարին այն բանից հետո, երբ Ճապոնիան հրաժարվեց գալ Եվրոպա, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված: «6 Ազգերի» ղեկավարները թափուր տեղի համար բավականաչափ ընտրություն ունեին: Սակայն վերջնական ընտրությունը կանգ առավ Վրաստանի վրա, որի համար մենք շատ շնորհակալ ենք «6 Ազգերի» միությանը: Շնորհակալություն նաեւ համաշխարհային ռեգբիին Վրաստանին աջակցելու համար»,- ասված է Վրաստանի ռեգբիի միության հայտարարության մեջ:

ՖՈՒՏԲՈԼ. ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻ ՄԵԿՆԱՐԿ

Վրաստանի եւ Հայաստանի ֆուտբոլի հավաքականները, Ազգերի լիգայի որակավորման երկրորդ տուրի շրջանակներում, «C» խմբում անցկացրին իրենց մեկնարկային առաջին երկու հանդիպումները: Առաջին փուլում Վրաստանի թիմը մրցակցի դաշտում 0:1 հաշվով առավելության հասավ էստոնիայի հավաքականի նկատմամբ: Երկրորդ փուլում, Վրաստանի ազգային ընտրանին իր դաշտում ոչ-ոքի՝ 1:1 հաշվով ավարտեց իր մրցավեճը Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականի հետ:

Հայաստանի հավաքականն առաջին հանդիպումը անցկացրեց Հյուսիսային Մակեդոնիայի թիմի հետ, մրցակցի դաշտում եւ 1:2 հաշվով զիջեց տանտերերին, իսկ երկրորդ հանդիպումը սեփական հարկի տակ անցկացրեց հաջողությամբ եւ 2:0 հաշվով առավելության հասավ էստոնիայի ընտրանու նկատմամբ:

Այսպիսով, խմբի մրցաշարային աղյուսակը երկու փուլերից հետո՝ 4-ական միավորով, գլխավորում են Վրաստանի եւ Հյուսիսային Մակեդոնիայի թիմերը: 3 միավորով նրանց հաջորդում է Հայաստանի հավաքականը: Աղյուսակը 0 միավորով եզրափակում է էստոնիայի թիմը:

Երրորդ տուրի շրջանակներում էստոնիան կմրցի Հյուսիսային Մակեդոնիայի հետ, իսկ Հայաստանի հավաքականը Երեւանում կխաղա Վրաստանի հետ: Խաղերը նախատեսված են հոկտեմբերի 11-ին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Էջմիածին հոգեւոր կենտրոնը Մաշտոցի ժամանակ: 9.Առասպել՝ «... եւ Բել»: 12.Ողջ, ամբողջ (ժող.): 13.Ե'վ քաղաք, ե'ւ լեռ Հայաստանում: 14. «Անուշ» օպերայում Սարոյի առաջին դերակատարը ... Տալյան: 15.Գյումրեցի հայտնի գուսան: 16.Անձնական դերանուն: 17.Կենդանու ոտք: 19. Շվեյցարիայի ոստանը: 20.Լոբազգի բույս: 23.Համադասական շաղկապ: 24.Պարզ, զուլալ, վճիտ: 29.Աֆրիկյան լիճ: 30.Ախալքալաքիի Գանձայում ծնված հայ բանաստեղծ: 34.Գանայի սիրտը: 36.Գալիք, սպասվելիք: 38.Ե'վ Վեռնոյը, ե'ւ Բարբյուսը: 39.Շատ գեղեցիկ, չնաշխարհիկ: 40.Ե.Չարենցի երկերից «Լենինն ու ...ն»: 42.«Վրաստանա գյոզալնեը» բանաստեղծության հեղինակ ... Հովնաթան: 44.Անվանի դերասան ... Գասպարյան: 47.Արաքս գետի անվանումներից: 48.Արեւմտահայ գրող Սիամանթոյի ծննդավայրը: 50.Աչքը շոյող գույն: 52.«... արա, եզո» ժողովրդական երգ: 53.... եւ տուր, առքուվաճառք: 55.Անշունչ իր: 57.Ներկա գտնվող: 58.Բայի ժամանակ: 59.Քաջ, անվախ: 60.Հանգստավայր Վրաստանում: 61.Ծովափնյա քաղաք Աբխազիայում: 62.Հովսեփ Վարդանյանի վեպը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ջինվորական փոքր խումբ: 2.«Արցախ» երաժշտության գործիքավորող ... Գեւորգյան: 3.Թբիլիսիում ծնված կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ֆիլմերից «Աշուղ ...»: 4.Ուրարտական արքա: 5.Վրաց թագուհի: 6.Իրանի բնակիչ: 7.Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս: 8.Քաղաք Ռուսաստանում: 9.Հայ երիտասարդ երգիչ եւ կոմպոզիտոր: 10.Ժխտական նախածանց: 11.Թբիլիսահայ անվանի գրող ... Էլիբեկյան: 18.Վառ կարմիր: 21.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 22.Իմաստ արտահայտող հնչյունախումբ: 25.Տեսողության օրգան: 26.Հարավամերիկյան գետ: 27.Ֆրանսիացի հայտնի կոմպոզիտոր: 28.Արցախյան քառօրյային նվիրված ֆիլմ «... ու կռիվ»: 31.Համադասական շաղկապ: 32.Երաժշտական գործիք: 33.Ֆրանսիայի քաղաքամայրը: 35.Լեռնագագաթ Արեւմտյան Հայաստանում: 35.Թբիլիսահայ մեծ դրամատուրգ: 39.«Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ ...» (Ե.Չարենց): 41.Թբիլիսցի կույր գրող Ծ.Թորգոմյանի պատմվածքներից «...ս գլխիդ»: 43.Ս.Եսենինի հայ հերոսուհին: 45.Երեխա, ժառանգորդ: 46.Հիվանդ, վատառողջ: 47.Ենիսեյի վտակներից: 49.Հացաբույսի տեսակ: 51.Թվաբանական գործողություն: 54.Բերդ-ամրոց Վրաստանի Ախալցիխե քաղաքում: 56.Երկկենցաղ կենդանի: 59.Պոչ, տուտ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Լատիշ: 7.Դողալ: 9.Տաղանդ: 11.Կարաչայ: 12.Սերգո: 15.Դասաեւ: 16.Խոժոռ: 17.Թակում: 20.Մազերատի: 23.Վան: 24.Լղար: 25.Լեհուհի: 28.Կորաքանոն: 29.Ասկյար: 30.Մեա: 32.Ջեթ: 34.Տապան: 37.Ալրմաղի: 38.Պարս: 39.Անհատ: 40.Ստրաբոն: 43.Կալի: 44.Ամիգո: 45.Մրտիմ: 46.Վշտակից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մոլախոտ: 2.Մատադոր: 3.Վկայական: 4.Լիդս: 5.Տկար: 6.Շալո: 8.Լաչառ: 10.Դաս: 13.Եկար: 14.Գյուտ: 17.Թերեք: 18.Կայուն: 19.Միջին: 20.Մայոր: 21.Ալմաստ: 22.Շաղկապ: 25.Լացել: 26.Հայ: 27.Հոնեղ: 28.Կաթնատամ: 30.Մասսիվ: 31.Արարատ: 32.Ջամբիկ: 33.Թիկնոց: 35.Ակներ: 36.Ապակի: 41.Ամա: 42.Ոգի:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445